ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-ԻՑ ՀՈՒԼԻՍԻ 4-Ը ՍԻՆԳԱՊՈՒՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

   Արման Պողոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (պատվիրակության ղեկավար)

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Սինգապուրի Հանրապետություն, 30.06.2019-04.07.2019թ.

4. **Հրավիրող կողմը.**

Սինգապուրի Հանրապետության ֆինանսների նախարարություն (համաձայնագրի նախագծի շուրջ բանակցությունները աշխատանքային կարգով քննարկելուց հետո սինգապուրյան կողմից առաջարկվել է բանակցությունների վերջնական փուլն իրականացնել Սինգապուրի Հանրապետությունում):

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Գործուղման նպատակը «Հայաստանի Հանրապետության կառավարության և Սինգապուրի Հանրապետության կառավարության միջև՝ եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագիր կնքելու շուրջ բանակցությունների իրականացումն էր:

6. **Քննարկված թեմաները.**

Բանակցությունների ընթացքում քննարկվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Սինգապուրի Հանրապետության կառավարության միջև՝ եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագրի նախագիծը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Տեղի են ունեցել բանակցություններ Սինգապուրի Հանրապետության հարկային մարմնի ներկայացուցչի կողմից ղեկավարվող բանակցային խմբի հետ:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Բանակցությունների ավարտին «Հայաստանի Հանրապետության կառավարության և Սինգապուրի Հանրապետության կառավարության միջև՝ եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագիրը նախաստորագրվել է և նախապատրաստվել է ՀՀ վարչապետի՝ Սինգապուրի Հանրապետություն պաշտոնական այցի ժամանակ ստորագրման համար:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Բանակցություններից ակնկալվող արդյունքը «Հայաստանի Հանրապետության կառավարության և Սինգապուրի Հանրապետության կառավարության միջև՝ եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագրի ստորագրումն էր, որը և տեղի է ունեցել ՀՀ վարչապետի՝ Սինգապուրի Հանրապետություն պաշտոնական այցի ընթացքում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

10.07.2019թ.